ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№__2643-Ա___ « 03 » հուլիսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի Հ.4159-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

1. Երևանի քաղաքապետի 2022 թվականի նոյեմբերի 30-ի «Երևանի քաղաքապետի 2012 թվականի փետրվարի 15-ի հ.1483-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու, Դավթաշենի 4-րդ թաղամասի հ.3-4 շենքերի հարող տարածքում գտնվող ավտոտնակի զբաղեցրած հողամասի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու, պայմանագրում փոփոխություններ ու լրացումներ կատարելու և հասցե տրամադրելու մասին» հ.4159-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանի 1-ին պարբերությունում «Սառա Մաթևոսյանի» բառերը փոխարինել «Սառա Մաթևոսյանի լիազորված անձ Մարիաննա Մխիթարյանի» բառերով.

2) որոշման նախաբանի 2-րդ պարբերությունում «1,527,403» թիվը փոխարինել «1,478,657» թվով.

3) որոշման նախաբանի 3-րդ պարբերությունում «Երևան քաղաքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 28-ի հ.498-Ն որոշման հավելվածով» բառերը փոխարինել «Երևան քաղաքի ավագանու 2024թ. դեկտեմբերի 24-ի հ.259-Ն որոշման հավելվածով» բառերով.

.4) որոշման 2-րդ կետում «Ռոման Համբարձումյանին» բառերը փոխարինել «Ալբերտ Հովասափյանին» բառերով.

5) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «Սառա Մաթևոսյանի» բառերը փոխարինել «Սառա Մաթևոսյանը» բառերով.

6) որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում «2027 թվականի դեկտեմբերի 1-ը» բառերը փոխարինել «2030 թվականի օգոստոսի 1-ը» բառերով.

7) որոշման 2-րդ կետի 6-րդ ենթակետում «1-ին կետի համաձայն» բառերը փոխարինել «3-րդ կետի գ ենթակետի համաձայն» բառերով.

8) որոշման 2-րդ կետի 7-րդ ենթակետում «2021թ. դեկտեմբերի 28-ի հ.498-Ն որոշման հավելվածի 38-րդ կետի» բառերը փոխարինել «2024 թ. դեկտեմբերի 24-ի հ.259-Ն որոշման հավելվածի 40-րդ կետի» բառերով:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ